ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունվարի 2015թ. N 15-Ա

ք. Արմավիր

«ՓԱՐԱՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՈՒՍՅԱԿ ՆԱՐԻՆԲԵԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ մասի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2014 թվականի հունվարի 19-ի զեկուցագիրը, «Փարաքարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արուսյակ Նարինբեկյանի հետ 2011 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 222 աշխատանքային պայմանագրի 4.1-րդ կետի «դ» ենթակետը և 2014 թվականի դեկտեմբերի 25-ի ծանուցագիրը.

որոշում եմ՝

1. 65 տարին լրանալու կապակցությամբ 2015 թվականի հունվարի 21-ից դադարեցնել «Փարաքարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արուսյակ Նարինբեկյանի լիազորությունները՝ լուծելով նրա հետ 2011 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 222 աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ